ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N ՄԳ/43-2019

„18„ 03 2019թ.

ք.Արտաշատ

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2019 թվականի տարեկան ծրագրով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Ավշարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում 2019 թվականի մարտի 18-ից մինչև մարտի 22-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի << Ավշարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կողմից 2016 , 2017 և 2018 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ մասի՝ ընտրանքային կարգով իրականացնել դրամական միջոցների և նյութական արժեքների գույքագրում:
4. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

Восстановимая подпись

X

ԳԱՐԻԿ ՄԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ